10030251

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ն Ա Խ Ա Ր Ա Ր


0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 04
Ֆաքս (+374 10) 52 42 82
Էլ. փոստ: minfin@minfin.am
Վեբ կայք: www.minfin.am


18.11.11. № 1/12.4/87637-11

Ձեր №

**ՀՀ կենտրոնական բանկի նախագահ**
**պարոն Արթուր Ջավադյանին**

Հարգելի պարոն Ջավադյան,

Ի պատասխան Ձեր 28.10.2011թ. թիվ 15.1-07/1127-11 գրության՝ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Կից ներկայացնում ենք վերոնշյալ նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

**Հարգանքով՝**

**Վաչե Գաբրիելյան**

Կատ.՝ Ֆինանսական շուկայի զարգացման վարչություն
Հեռ.՝ 59-53-18

## Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի կապակցությամբ ՀՀ կառավարության 10.09.2009թ. N 1021-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

***1. Նորմատիվ իրավական ակտի նախագծի կարգավորման առարկան և արդյունքները.***

Նախագծերի ընդունմամբ նախատեսվում է ապահովագրության բնագավառում օրենքով սահմանված պատասխանատվությունների խստացում և հնարավոր խախտումների համար նոր տուգանքների և պատիժների սահմանում:

***2. Նորմատիվ իրավական ակտերի նախագծի ընդունման կամ չընդունման դեպքում դրանց կիրարկման արդյունքում նախատեսվող հետևանքները և բյուջետային բնագավառի վրա դրանց ազդեցությունն ըստ ժամկետների.***

Նկատի ունենալով, որ նախատեսվում է նոր տուգանքների սահմանում, ապա նախագծերի ընդունումը ենթադրում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների ավելացում:

Միաժամանակ, հաշվի առնելով իրավախախտումների անկանխատեսելիության փաստը, գտնում ենք, որ ՀՀ օրենքների հիշյալ նախագծերի ընդունման դեպքում բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության կոնկրետ գնահատում հնարավոր չէ իրականացնել: